

ծշմարտիւ արիւն իցէ Որդւոյն Աստուծոյ, յորժամ ելանիցէ ի սեղանն Աստուծոյ¹. այլ նմա գինի լոյ թուէր թէ իցէ, վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս: 6 Իսկ եղէ աւր մի յաւուրց, իբրեւ կատարէին անդ գլխորհուրդս գոհութեան պատարագին ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ սրբոյն Եպիփանու, յորժամ հանին զհացն սրբութեան եւ զգինին՝ արիւնանալ պատարագին ի վերայ սեղանոյն, եւ կայր եղբայրն, անհաւատ ի վկայանոցին: 7 Եւ երեցն ելեալ կայր ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն. յորժամ յառաջ քան զմատուցանել զպատարագն համբառնայր զձեռս երեցն ի վերայ սեղանոյն, եւ ասէր.

8 Տէր Աստուած զաւրութեանց, որ արարեր զամենայն² յոչընչէ, եւ ստեղծեր զմարդ ի հողոյ կենդանի եւ անապականացու, եւ անցին զքոյով պատուիրանաւոր, ի անկան եւ մահ՝ իւրեանց պատուիրանազանցութեամբն: 9 Եւ արդար դատաստանաւք թովք մերժեցեր զնոսա ի դրախտէն փափկութեան յայս աշխարհ՝ ուստի ստեղծեր, եւ գրաւեցան լինել ընդ մահապարտութեամբ. սակայն ոչ թողէր ի ձեռանէ, բարերարդ Աստուած, այլ տեսչութեամբ եւ շնորհաւք միածնիդ թո վերստին ծննդեամբ նորոգեցեր զստեղծուածս թո, եւ բազում կերպարանաւք այցելու եղեր արարածոց թոց: 10 Առաքեցեր զմարգարէս, արարեր զաւրութիւնս ազգի ազգի նշանս ի ձեռն սրբոց թոց՝ որք յազգս ազգս իւրեանց հաճոյ եղէն առաջի թո. ետուր զաւրէնս յաւանականութիւն, առաքեցեր հրեշտակս վերակացուս: 11 Իսկ իբրեւ եկն կատարած ժամանակաց, խաւսեցար ընդ մեզ միածին Որդւովդ թո՝ որով զաշխարհս արարել, որ է պատկեր փառաց թոց եւ կերպարանք էութեան թո, եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեամբ. որ ոչ ինչ յափշտակեաց զեական Հաւրն զբնութեանն հաւասար պատիւ անձինն, այլ Աստուածն յափտենական ի յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, ի սրբոյ Կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ, եւ եղէ ի նմանութիւն տկարութեանս մերոյ, զի արասցէ զմեզ նմանակիցս փառաց իւրոց: 12 Չի յամենայն զայթակրողութեանց եւ յամենայն մոլորութենէ փրկեցեր զմեզ. եւ բարձեր յամենայն երկրէ զանյուսութիւն թերահաւատութեան, եւ ետուր գլուսոյ զհաւատս յարութեան ամենայն թոց արարածոց, որոց եւ զնմանութիւն պատկերի կերպարանաց թոց շնորհեցեր: 13 Եւ հաւատովքն, զոր ետուր զաւրանալ ի մարդիկ, զամենեսեան առ հասարակ միանգամայն կեցուցեր շնորհելով. զի ոչ եթէ վասն արդարութեանց ինչ մերոց, զի ոչ ինչ արարաք զբարիս ի վերայ երկրի, այլ վասն ողորմութեան եւ գթութեան թո՝ զոր սփռեցեր ի մեզ՝ համարձակիմք ինդրել ի սրտագետեդ, որ քննես զսիրտս եւ զերիկամունս

1 Ի միում օրինակի՝ ի սեղանն սուրբ եւ բաշխեալ ձեռամբ քահանային. այլ նմա

2 Օրինակ մի յաւելու՝ արարածս